[1] Դուրս գրման ամսաթիվ		
14	Հունիս	2018 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
14	Հունիս	2018 թ.

Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	3807971217

Ճշգրտվող հաշիվ վավերագրի

Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ

Պայմանագիր

[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	6	9	0	2	0	8	7	
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը									

[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՑԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ	N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[14] Լրացուցիչ տվյալներ		

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3	

[16] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[17] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[19] Լրացուցիչ տվյալներ		
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն	
	Լիազորագիր — Համար	
	Լիազորագիր — Ամսաթիվ	
[21] Մատակարարման (առաքման) եղանակը		
[22] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	

[23] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնակ. հարկ	Այդ թվում՝ ապրանքի վերջին գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 47151918բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անուն, ազգանուն)

Ստացող
(անուն, ազգանուն)

14/06/2018 12:35:30

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն
նշանակելու մասին

<< 14 >> մայիսի 2018թ. ք. Նոյեմբերյան

Նոյեմբերյանի քննչական բաժնի ավագ քննիչ առաջին դասի խորհրդական Ա. Ա. Աբովյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 47151918 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Նոյեմբերյան համայնքի Դովեղ գյուղի բնակիչ Արտյոմ Փաշիկի Ղազարյանը 2018 թվականի մարտի 28-ի լույս 29-ի գիշերը, ժամը 00:00-ի սահմաններում, հարևանությամբ բնակվող Քրիստինա Գառնիկի Պռազյանի կամքին հակառակ, մուտքի դռնով ապօրինի մուտք է գործել վերջինիս՝ Դովեղ բնակավայրի 2-րդ փողոցի 3-րդ հասցեում գտնվող տուն, նկատվել Քրիստինա Պռազյանի ու վերջինիս սկեսրոջ՝ Սեդա Պողոսի Սարգսյանի կողմից ու դիմել փախուստի:

Դեպքի առթիվ ոստիկանության Նոյեմբերյանի բաժնում 2018 թվականի ապրիլի 9-ին ՀՀ քրեական օրենսգրքի 147 հոդվածի 1-ին մասով հարուցվել է սույն քրեական գործը և ենթակայության կարգով ուղարկվել ՀՀ ՔԿ Տավուշի մարզային քննչական վարչության Նոյեմբերյանի քննչական բաժին, ինչն ընդունվել է վարույթ, կատարվում է նախաքննություն:

2018 թվականի մայիսի 7-ին որոշում է կայացվել Արտյոմ Փաշիկի Ղազարյանի նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին, վերջինիս նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն՝ չհեռանալու մասին:

Արտյոմ Փաշիկի Ղազարյանն իր՝ որպես կասկածյալի ցուցմունքով հայտնել է, որ 2018 թվականի մարտի 28-ին, ժամը 23:50-ի սահմաններում, ոգելից խմիչք օգտագործած՝ ոչ սթափ վիճակում, հիշել է իր և Քրիստինա Պռազյանի ամուսնու՝ Երվանդ Սարգսյանի, միջև շուրջ 2 տարի առաջ տեղի ունեցած վեճը: Այդ ժամանակ որոշել է գնալ նրանց տուն ու Երվանդ Սարգսյանից վրեժ լուծելու նպատակով ծեծել Քրիստինա Պռազյանին: Տեղյակ լինելով, որ Երվանդ Սարգսյանը տանը չէ, գնացել է նրանց տուն, բացել մուտքի դուռն ու ներս մտել, նկատել քնած վիճակում գտնվող Քրիստինա Պռազյանին, մոտեցել է վերջինիս ու ձեռքի ափով փակել բերանը: Քրիստինա Պռազյանի ձայնից արթնացել է նրա մոտ քնած սկեսուրը՝ Սեդա Սարգսյանը, որից հետո ինքը դիմել է փախուստի:

2018 թվականի մայիսի 14-ին որոշում է կայացվել անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նույն օրն Արտյոմ Ղազարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 147 հոդվածի 1-ին մասով: Առաջադրված մեղադրանքում Արտյոմ Ղազարյանն իրեն մեղավոր է ճանաչել և հրաժարվել է ցուցմունք տալ, խնդրելով հիմք ընդունել իր՝ որպես կասկածյալի հարցաքննության ցուցմունքը:

Քրեական գործի նախաքննության ընթացքում <<Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ>> ՓԲԸ-ին կատարված հարցմամբ պարզվել է, որ վերջինս նյարդահոգեբուժական և նարկոլոգիական կաբինետներում հաշվառման մեջ չի գտնվում:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Արտյոմ Փաշիկի Ղազարյանի մոտ հոգեկան հիվանդության առկայությունն ու բնույթը որոշելու և սույն գործով էական նշանակություն ունեցող մի շարք հարցերի պարզաբանման համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի, ղեկավար-

վելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-245 և 248 հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Վարույթումս քննվող թիվ 47151918 քրեական գործով մեղադրյալ Արտյոմ Փաշիկի Ղազարյանի նկատմամբ նշանակել դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ առողջապահության նախարարության <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> պետական փակ բաժնետիրական ընկերության փորձագետներին:
2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ նկարագրված հանցավոր արարքը կատարելու պահին գործով մեղադրյալ Արտյոմ Փաշիկի Ղազարյանը տառապել է արդյոք հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա ինչ հիվանդությամբ, երբվանից է տառապում.
բ/ Հանցավոր արարքը կատարելու պահին գործով մեղադրյալ Արտյոմ Փաշիկի Ղազարյանը կարող էր արդյոք հաշիվ տալ իր գործողություններին կամ ղեկավարել դրանք.
գ/ Ներկայումս Արտյոմ Փաշիկի Ղազարյանը հոգեկան որևէ հիվանդությամբ տառապում է, թե ոչ, կարող է արդյոք հաշիվ տալ իր գործողություններին կամ ղեկավարել դրանք:
դ/ Արտյոմ Փաշիկի Ղազարյանը նկարագրված հանցավոր արարքը կատարելիս մեղսունակ եղել է, թե ոչ, ներկայումս մեղսունակ է, թե ոչ:
ե/ Արտյոմ Փաշիկի Ղազարյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում:
զ/ Արտյոմ Փաշիկի Ղազարյանն իր հոգեկան վիճակով կարող էր ճիշտ ընկալել գործի համար կարևոր հանգամանքները և դրանք ճիշտ վերարտադրել.
է/ Արտյոմ Փաշիկի Ղազարյանն իր հոգեկան վիճակով ներկայումս կարող է մասնակցել քննչական գործողություններին, թե ոչ:
3. Փորձագետին ներկայացնել մեղադրյալ Արտյոմ Փաշիկի Ղազարյանին, թիվ 47151918 քրեական գործի նյութերը, <<Նիկոլայ Նասիբյանի անվան Նոյեմբերյանի ԲԿ>> ՓԲԸ-ից և <<Արևհատ և Անի>> ԸԲԱՊ ՍՊԸ-ից ստացված՝ մեղադրյալի վերաբերյալ ամբուլատոր բժշկական քարտերը:
4. Փորձագետին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշմամբ չեն առաջադրվել, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում և կարող են կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:
5. Հանձնարարել ՀՀ առողջապահության նախարարության <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> պետական փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ պարզաբանել փորձագետին, ում հանձնարարվելու է փորձաքննության կատարումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված փորձագետի իրավունքները և պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ Ա. Ա. Աբովյան